ավերի գիտական, ժողովրդագրական և տեղագրական նշանակություն ունեին։— Մյուս կողմից, ծանոթությունների ընթերցումը կարող էր թուլացնել վեպի տպավորությունները[5]։ Գեղարվեստական տեքստի և գիտական տեքստի համակ տարբերակումը և դրանց հակադրությունը, որպես տարբեր համակարգերի, Րաֆֆուն ստիպում է առանձնացնել դրանք, քանի որ, ինչպես ինքն է նշում՝ դրանց համատեղումից առաջին հերթին վնասվում է վեպի ներգործության աստիճանը։ Բայց մյուս կողմից էլ բուն տեքստը հեղինակի կողմից ծանրաբեռնված է ծանոթագրվող հատվածները ազդանշող թվանշաններով, որոնց թիվը հասնում է 764-ի։ Հետագա հրատարակություններում (բացի վեպի երկրորդ հրատարակությունից, Վիեննա, 1898) այդ թվանշանները ջնջվել են, որոնք սույն հրատարակության մեջ վերականգնված են։ Հեղինակի կողմից նշված ծանոթագրվող հատվածների քանակը արդեն իսկ ցույց է տալիս, թե ինչքան մեծ ծավալի նյութ է մտել «Սամվել» վեպի գեղարվեստական համակարգի մեջ, ընդ որում տարբեր աղբյուրների լեզվաոճական առանձնահատկությունների մշակումը և դրանց միաբնականացումը գրողի խոսքային գործունեության մեջ ռաֆֆիագիտության կողմից դեռևս չի ուսումնասիրվել։ Այս պրոցեսի դիտարկումը նշված տեսանկյունից բացահայտում է հեղինակի ստեղծագործական աշխատանքի շատ հետաքրքիր կողմեր, հնարավորություն է տալիս նորովի գնահատելու և վերանայելու վեպի հետ կապված մի շարք խնդիրներ։ Սույն հրատարակության մեջ առաջին անգամ կներկայացվեն բնագրային այն տարբերությունները, որոնք գոյացել են հեղինակի կենդանության օրոք տպագրված վեպի երկու հրատարակությունների միջև։ Վեպն առաջին անգամ տպագրվել է «Արձագանք» շաբաթաթերթում (1886—1887), այնուհետև նույն շարվածքից արտատպվել է առանձին գրքով (1888)։ Այս երկու հրատարակությունների համեմատությունը ցույց տվեց, որ Րաֆֆին վեպի տեքստում կատարել է շուրջ 250 փոփոխություն (կետադրություն, բառի հավելում, նախադասության ընդարձակում, պարբերությունների հավելում և այլն)։ Այս հսկայածավալ նյութը ծանոթագրելիս բնագրագետը չպետք է սահմանափակվի տեքստում հանդիպող հատուկ անունների բացատրությամբ միայն, այլ մի կողմից պետք է ցույց տա այն գեղարվեստական ֆունկցիան, որ կատարում է տվյալ անունը պատումի մեջ ստեղծված ամենատարբեր իրավիճակներում և մյուս կողմից ներկայացնի այն աղբյուրը, որից օգտվել է գրողը տեքստի տվյալ հատվածի ստեղծման ընթացքում՝ միաժամանակ տալով այդ աղբյուրի օգտագործման եղանակը ամեն մի դեպքի համար առանձին։ Որեմն, ծանոթագրությունները պետք է գրվեն ոչ թե տեքստի առիթով, ինչպես որ հաճախ արվում է (այսպես կոչված «տարրերկայական» ծանոթագրությունները»), այլ տեքստի մասին։

Դասական գրողների ժառանգության ամեն մի նոր հրատարակություն, հարստացնելով մեր պատկերացումները այդ գրողի մասին, միաժամանակ խթանում է բնագրագիտության զարգացմանը, առաջադրում է նոր խնդիրներ, որոնք հաճախ հնարավոր չի լինում լուծել արդեն ստեղծված և հաստատված ավանդների հիման վրա։ Յուրաքանչյուր գրողի ստեղծագործության հարուցած խնդիրները և դրանց լուծումները բխում են նրա առանձնահատկություններից, ուստի պետք է հատուկ սկզբունքներ մշակվեն տեքստերի հրատարակությունը գիտականորեն և բարձր մակարդակով իրագործելու համար։

5 «Արձագանք», 1886, № 7, էջ 99։

Գ. Է. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ 1983—1984 թթ. ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

1983—1984 թթ. աշխատանքները շարունակվել են միջնաբերդում և քաղաքի արևմտյան ծայրամասում գտնվող հելլենիստական դարաշրջանի ագարակում։ Միջնաբերդում շարունակվել է ուրարտական ժամանակաշրջանի այսպես կոչված մերձտաճարային համալիրի ուսումնասիրությունը։ Պեղվել են մի շարք սենյակներ, որոնք ընդարձակում են մեր պատկերացումները համալիրի ճարտարապետական և հատակագծային առանձնահատկությունների մասին (նկ. 1)։ Սենյակները բացվել են համալիրի հյուսիսային, արևմտյան և հարավային մասում։ Պատերը, ուրարտական շինարարական տեխնիկայի համաձայն, շարված են հում աղյուսներից՝ քարե հիմքերի վրա։

Համալիրի հարավային մասում, միջանցքի հարավային թևին հարող սենյակում (№ 15) երևում են բլրի լանջի դարավանդաձև կառուցապատման նշաններ, բացահայտված է պատերի ու հատակների աստիճանաձև բնույթը։ Հյուսիսային պատի



Նկ. 1

մեջ տեղադրված դռան բացվածքով (լայնքը՝ 1 մ) սենյակը հաղորդակցվում է միջանցքի և նրա օգնությամբ՝ ողջ համալիրի հետ։ Լանջով կայր իջնող արևելյան և արևմտյան պատերը, անգամ նրանց հիմքերը որոշ հեռավորության վրա չքանում են, սակայն հյուսիսային պատի մոտ, 10 մետրի վրա, անսպասելիորեն բացվեց հարավային պատի քարե հիմքերի մի հատված (լայնքը՝ 1,55 մ), որով ուրվագծվեց սենյակի քառակուսի բնույթը (10×10 մ)։ Հատակի վերևի հատվածները նստած են հարթեցված ժայռի վրա, ներքևի մասում հատակը բարձրացված է քարի 1 մեթի կուտակումների օգնությամբ։ Տեղտեղ հատակը ծածկված է վառված շերտով և ծծմրկ նստվածքով։ Պատերի մեջ և պատերի տակ տեղադրված են եղել միջնադարյան տնտեսական հորեր, թաքստոցներ։ Հնագիտական գրտածոները՝ երկաթե զենքեր և գործիքներ, կավանոթների բեկորներ, վերաբերում են ուրարտական, անտիկ և միջնադարյան դարաշրջաններին։ Համալիրի արևմտյան մասում պեղվեցին նույն միջանցքից սկիզբ առնող, մի գծի վրա դասավորված ու իրար հետ հաղորդակցվող շինությունների մի շարքի երկու սենյակները (№ 16 և № 17)։ № 16 սենյակը (չափերը՝ 3,60×3,50 մ) աչքի է ընկնում իր խորությամբ՝ պատերի բարձրությունը հասնում է 3,5 մետրի, արևմտյան պատի ծայրին պահպանվել է դռան բացվածքը, որի

մեն լավ երևում են վերևից փլված աղյուսե շարքերը։

Սենյակի վերին շերտերում, նրա հյուսիս-արևելյան անկյունում բացվեցին ավելի ուշ, գուցե Հելլենիստական ժամանակաշրջանի պատի մի հատվածի լավ շարված ուղիղ հիմքերը, իսկ կողքին մի հոր՝ հնագիտական նյութերով։ Մեկ այլ հոր ուրվագծվեց հյուսիսային պատի մեջ։ Մոտ 1 մ խորության վրա սկսեց երևան գալ ուրարտական խեցեղենը, որի բանակն ավելացավ հատակին մոտենալիս։ Բացվել են ուրարտական



Նկ. 2

Նկ. 3

ժամանակաշրջանի տարբեր հատակներ։ Վաղագույնը քարե հիմքերի ստորին մակարդակի, իսկ ամենավերջինը՝ նույն հիմքերի վերին մակարդակի վրա է։ Ստորին հատակին երևում են քարաշեն աստի եզրային քարերի հետքերը։ Առուն հավանաբար ծառայել է ջուր հեռացնելու համար։ Այստեղ գտնված ուրարտական խեցեղենը սովորական է։ Աչքի է ընկնում կճուճի մի բեկոր սեպագիր նշաններով։

Արևմտյան կողմում բացվեց հարևան № 17 սենյակը, որը տեղանքի իջվածքի պատճառով վատ է պահպանվել։ Բացվել են միայն երեք պատերը (հյուսիսային, արևելյան և հարավային), այն էլ խիստ վնասված վիճակում։ Այստեղ միջնադարյան շերտը բավականին խոր է նստած և նրան պատկանող պատերն ու հորերը բջել են ուրարտական սենյակի մեջ, որի արևմտյան մասում, բավականին խոր մակարդակում, բացվեցին ինչ-որ պատի քարե հիմքերը։ Հնագիտական նյութը այստեղ խառն է։

Համալիրի հյուսիսային մասում բացվեց երեք սենյակ. մեկը (№ 13)՝ միջանցքի հյուսիսային թևին կից դասավորված սենյակներից չորրորդն է, մյուս երկուսը (№ 14 և № 18) հյուսիսից կից են լանջնիվար իջնող վերոհիշյալ սենյակաշարին։

№ 13 սենյակը, ինչպես այս շարքի մյուս սենյակները, հենց սկզբից հնագիտական նյութ տվեց։ Վերևի շերտերում բացվեցին հյուսիսից հարավ ընթացող անկանոն շարված պատի քարե հիմք, հատակի հետքեր, գտնվեցին մարդու կմախք և միջնադարյան խեցեղեն։

Այս շերտից սկսեց հանդես գալ հելլենիստական դարաշրջանի նյութ, որը շարունակվում է մինչև 1,20 մ—1,50 մ խորությունը (խեցեղեն, հղկված քարե տուփի բեկոր, երկաթե դաշույն և այլն)։ Աստիճանաբար բացվեցին նաև սենյակի չորս պատերը, որով նշգրտվեցին նրա չափերը՝ 3,40×5,20 մ։ Արևմտյան պատի մեջ երևում են տնտեսական հորեր և իջվածքների հետքեր։ Հա-

զորդակցվում է միայն նախորդ տարիներում բացված հարևան սենյակի հետ։

№ 14-ը պեղվեց հյուսիսային սենյակներից առաջինի (№ 8) հարևանությամբ, հյուսիսային լանջն ի վար. միմյանց հետ սրանք հաղորդակցվում էին դռնով (լայնքը՝ 1,60 մ)։ Նոր բացվող սենյակից դիտելիս երևում են դռան բացվածքի մեջ կանոնավոր շարքերով իջած աղյուսները, ելված՝ փայտե պարակալը վառվելու հետևանքով։ Թեպետ տեղանքի պատճառով պատերի պահպանված մակարդակը խիստ իջնում է, բայց հաջողվեց սենյակը ուրվագծել (չափերը՝ 5×



Նկ. 4 Նկ. 5

2,50 մ)։ Հատակը աղյուսից է, որի վրա կավե շերտով ծածկված մանր գլաքարեր են փռված։ Սենյակի մյուս պատերում ևս պահպանվել են դռան բացվածքներ, որոնցով այն հաղորդակցվում է հարևան սենյակների հետ։ Արևելյան և արևմտյան դռները նեղ են՝ 0,75 մ և լցված վերևից թափված աղյուսներով, հյուսիսային դռնից պահպանվել է ստորին մասը (լայնքը՝ 1 մ)։ Արևելյան դուռը վկայում է, որ հյուսիսային լանջի տաճարային շենքից ներքև ընկած հատվածը ևս կառուցապատված է եղել։

Արևմտյան դուռը տանում է դեպի հարևան՝ № 18 սենյակը, որտեղից գտնված նյութերը ուրարտական են, մասամբ էլ՝ հելլենիստական։ Արևմտյան պատի մեջ բացվեց միջնադարյան հոր։ № 18 սենյակը ուղղանկյուն է (4,90× 2,50 մ), պահպանված պատերի բարձրությունը՝ 3,40 մ։ Նրա արևելյան և արևմտյան պատերին բացվեցին մի առանցքի վրա դրված նեղ դռներ։ Հարավ-արևմտյան անկյունում կա մեծ հոր (տրամագիծը՝ 1,15, խորությունը՝ 1մ)։ Սենյակի մի հատակը դրված է պատերի քարե հիմքերի վերին մակարդակին, խճի հաստ շերտի վրա։ Նրա վրայից գտնվեցին ածխացած փայտի մնացորդներ է ուրարտական բրոնզե շիգդ։ Հատակի տակ հայտնաբերվեցին փոքր չափի աղյուս, խեցու բեկորներ, քարից պատրաստված անիվ, մեծ քարեր (մեկը մաշված), որոնք ապացուցում են, որ սենյակը ունեցել է ավելի վաղ ստորին հատակ, պատի քարե հիմքերի ստորին մակարդակին հավասար (ինչպես № 16 սենյակում)։

Ուրարտական ժամանակաշրջանի հնագիտական նյութը ներկայացված է կավանոթների բեկորներով, մետաղե առարկաներով, քարից և փայտից պատրաստված առանձին իրերով (նկ. 2)։

Խեցեղենից գտնվել են փոքր կարասների շուրթերի և իրանի բեկորներ, բաց և մուգ մոխրագույն, գորշագույն, աղյուսագույն։ Շուրթերը հաստ են, դեպի դուրս ծռված, մեկը վերևից տափակ է, մյուսի տակով դրսից խոր ակոս է անցնում։

Որոշակի մի խումբ են կազմում կարմիր անփայլ կամ փայլեցրած, ինչպես նաև բաց գույնի սափորների շուրթերի, իրանների, կանթերի և հատակների բեկորները։ Սափորների շուրթերը երեսնուկաձև են, բարձր կամ միջին բարձրության վզով և իրանի ու վզի անցումը նշանավորող ուլիկաձև նեղ գոտիով։ Հատակի բեկորը ունի կլոր ոտք։ Կանթերը աղեղնաձև են կամ կլոր, դրսից երկայնակի փորվածքով։

Երկու փչիկավոր կանթեր, մեծը՝ կարմիր փայլեցրած, փոքրը՝ դարչնագույն, պատկանում են ուրարտական խեցեգործությանը բնորոշ, երկկանթանի երկու տարբեր սափորների, որոնք որպես կանոն սլացիկ են և ունեն պրոֆիլավորված ուրվագիծ։

Գտնվել են նաև մոխրագույն և դարչնագույն, ինչպես և կարմիր փայլեցրած բրեղաններ և թասեր։

Ուշադրության արժանի է մեծ, հաստափոր, օքրայագույն կճուճի բեկորը՝ կարճ գլանաձև վզով, դեպի դուրս ծռվող և հաստացող շուրթով։ Վզի հիմքում կա ուռուցիկ նեղ գոտի և ակոս է արված։ Անոթի ուսին փորագրված է սեպերի չորս խմբից բաղկացած արձանագրություն, որի բովանդակությունը հավանաբար առնչվում է անոթի տարողության հետ։

Կավանոթների պատերին հանդիպում են դրոշմման և փորագրման եղանակով արված նշաններ։ Դրոշմանշանները օվալաձև են, մեջը ամպհովանու կամ արմավենու պատկերով։ Փորագրման եղանակով են արված անկյունավոր գիծը և մեջը տեղադրված կլոր նշանը։

Ուրարտական շերտի մեջ գտնվել են փայտե ձողիկներ՝ անցքերով և ծռվող ծայրերով, որոնք կարող են դամբյուղի մասեր լինել։ Գտնվել են նաև դռան տուֆե կրնկաքար և քարե անիվի բեկոր։ Մետաղե իրերից ուշադրության արժանի են բրոնզե թաթիկավոր շիղերը՝ բնորոշ ուրարտական ժամանակաշրջանի համար[1]։

Անտիկ դարաշրջանի հնագիտական նյութը պարունակում է խեցեղեն, մետաղե առարկաներ, քարե և ապակե անոթների բեկորներ (նկ. 3, 4) և այլն։

Խեցեղենից հանդիպում են կարասների լայն կանթեր՝ մոխրագույն և օքրայագույն, ուռուցիկ և փորիկավոր զարդերով. ամբողջական կճուճներ՝ մոխրագույն և գորշավուն, ինչպես նաև պուլիկ՝ բաց գույնի, կարճ վզով և քիչ դեպի դուրս թեքվող պսակով։ Գտնվել են՝ ցածրանիստ կարմիր փայլեցրած սափոր՝ երեսնուկաձև շուրթով, կարճ վզով, փոքր կանթի հիմքերը պահպանված շուրթին և իրանին. բնորոշ բրեղանների բեկորներ՝ օքրայագույն, գորշավուն, շուրթի տակ ներքերված գոտիով. թասերի բեկորներ շուրթերի տարբեր ձևավորմամբ՝ ներսից խաչաձև կամ ճառագայթաձև զունազարդումով. բժպանակներ և այլն։ Ուշադրության արժանի է ամֆորաձև անոթի պսակի բեկորը՝ ուղիղ վզով, դեպի դուրս հաստացող շուրթով, նրա տակ՝ ուռուցիկ անցումով։ Պահպանվել են կանթի հետքերը։ Մեծ հետաքրքրություն են ներկայացնում նույն ժամանակաշրջանին վերաբերող երկաթե առարկաները՝ № 16 սենյակի հատակին գտնված թուրը, նիզակի ծայրերը և բահերը։ Թրի պահպանված երկարությունը 0,53 մ է, իսկ լայնքը՝ 0,05 մ, մեկ սայրանի է, բավականին հաստ կռնակով։ Դաստակը լավ չի պահպանվել, բայց երևում են գամերի հետքերը։ Թուրը իր զուգահեռն ունի Արտաշատի 1972 թ. պեղումների չհրատարակված նյութերի մեջ։ Հրդեհի պատճառով իրար կպած երկու նիզակի ծայրերը ունեն սնամեջ կոթառներ, եռանկյունաձև միջնաջղով շեղբեր և նույնպես կարող են աղերսվել անտիկ դարաշրջանի նյութերի հետ։ Մեծ հետաքրքրություն են ներկայացնում երկաթե բահերը։ Նրանց աշխատող մասը կլորավուն է, որից դեպի վեր են ձգվում երկու թևեր։ Սրանք, ինչպես և աշխատող մասը, վերևից բացվածք-ճեղքեր ունեն, որի մեջ մտցվում, ամրացվում է բահի փայտյա մասը։ Նման առարկա գտնվել է Արմավիրում դեռևս 1963 թ.[2]։ Թեպետ նման բահերը իրենց զուգահեռներն ունեն Եվրոպայի միջնադարյան նյութերի մեջ[3], սակայն սրանց թվագրումը անտիկ ժամանակաշրջանով հավանական է թվում։

---

[1] А. А. Мартиросян. Аргиштихинили. Ереван, 1974, с. 150, рис. 97; R. B. Wartke. Archäologische Expedition der DDR im Haditha Gebiet. — Das Altertum, Heft 3, 1983, Bd. 29, Abb. 3.

[2] Б. Н. Аракелян. О некоторых результатах археологического изучения древнего Армавира.—«Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 4, էջ 172։ Վ. Զինչիրճյան. Հայաստանի անտիկ դարաշրջանի երկաթյա գյուղատնտեսական գործիքները. Նույն տեղում, 1978, № 1, էջ 205—266, աղ. 1, 1։

[3] Б. А. Колчин. Черная металлургия и металлообработка в древней Руси. М., 1953, с. 89, рис. 51; R. Pleiner. Stav metalografickeho vyzkumu. Praha, 1962, s. 220, obr. 39.

Քարե անոթի բեկորը պատրաստված է հղկված պորֆիրիտից և պատկանում է Հայաստանի անտիկ հուշարձաններում, այդ թվում և Արմավիրում, լայն տարածում ստացած քարե սկահակներին։ Քարե մյուս անոթի բեկորը ունի լավ հղկված սև գույնի մակերես, որի վրա արված են փորագիր և ուռուցիկ զարդեր (եռանկյունաձև, սլաքաձև, կետաձև)։

Միջնադարյան մշակույթի մնացորդները, բոլոր տարիների նմանությամբ, դուրս են գալիս համարյա բոլոր սենյակների վերին շերտերից և հորերից (Նկ. 5)։ Հիմնականում դերիշխում է



Նկ. 6

խեցեղենը, որը ներկայանում է բոլոր տեսակներով՝ հասարակ, խոհանոցային, կարմիր փայլեցրած և ջնարակած։

Հասարակ խոհանոցային խեցեղենի մեջ շատ առատ են բազմատեսակ կճուճները՝ լայն և նեղ պսակներով, կանթավոր և անկանթ, որոնք վրզերին ու իրաններին կրում են բնորոշ փորագիր և ներճկված զարդագոտիներ։ Հանդիպում են նաև կարմիր ներկած օրինակներ։ Հետաքրքիր են դրանց կափարիչները՝ լայն փոված եզրերով, «մանչ» կամ «աղջիկ» բռնակներով։ «Մանչ» բռնակներից մեկը կրում է ռելիեֆ ուղիղ քթով և կեռ հոնքերով դիմանկար։ Կափարիչները կանթերի տակ կրում են նեղ ճեղք-անցքեր՝ եփվող կերակուրի գոլորշու հեռացման համար։

Կոպիտ ձեռածեփ խոշորահատ կավից է պատրաստված շարժական կրակարանի կամ սաճի բեկորը, որն ունի հատակի նկատմամբ ուղղահայաց ամրացված կողեր՝ ալիքավոր ձևավորված շուրթերով։ Կողին պահպանվել է երկճյուղանի ունկ-կանթը։

Ծափերը ունեն հարթ կտրած շուրթեր, կարճ վզեր, որոնք նստած են անմիջապես ուռուցիկ ուսերին։ Այս միացումը ընդգծված է նեղ, ուռուցիկ գոտիով։ Ծափերից մեկը ողջ իրանի և հատակի վրա կրում է անցքեր և հավանաբար ծառայել է որպես քամիչ։

Ծափորները, որոնք հայտնաբերվում են թե՛ ամբողջական, թե՛ բեկորային, փայլեցված չեն, միջին չափերի են, կլոր կամ եռատերև ձևավորված շուրթերով, կարճ վզով։ Կանթերը շուրթից իջնում և հանգչում են իրանի լայն մասում։ Ինչպես բնորոշ է զարգացած միջնադարի սափորներին, շուրթերի և իրանների վրա կրում են մեկից մինչև մի քանի փորագիր գոտիներ։

Հասարակ քրեղանները հանդիպում են նեղ կամ լայն, հարթ կտրած շուրթերով, որոնց միացումը կողերին կատարված է որոշ ընդգծմամբ, իսկ կողերն էլ իրենց հերթին միանում են սուր կամ կլոր անցումներով։ Քրեղաններից մեկը կոոին ունի տափակ սեղանաձև ունկ-կանթ։ Այս քրեղանների մի մասը վերաբերում է արդեն կարմրափայլ խեցեղենի տեսակին։ Ներկը քսված է դրսից պսակին, իսկ ներսից՝ ամբողջ տարածքին, հատկանիշ, որը ժառանգաբար գալիս է խեցեղենը հարդարելու անտիկ ավանդներից։

Համարյա առանց բացառության կարմիր ներկած և փայլեցրած են կարասների հայտնաբե-

բաս բեկորները։ Դրանք պատկանում են XI—XIII դդ. բնորոշ, հարթ կտրած շուրթերով, կարճ և լայն վզերով կարասներին, վզի վրա շուրթի տակ կրում են փորագիր, ռելիեֆ և դրոշմներով կատարված դարդագոտիներ՝ ալիքների, պարանաձևության, խոր եռանկյունիների ձևով։ Բեկորներից մեկը ներկայացնում է կարասի իրանի կենտրոնով անցնող ուռուցիկ լայն գոտի՝ վրան կենաց ծառի երկու կողմերում նստած այծերի դաջված պատկերով։

Եիսա ծանծաղ սկուտեղի բեկորը ունի դեպի ներս հակված թմբիկավոր շուրթ, որը կրում է



Նկ. 7

այիրաձև փորագիր զոտիներ։ Շուրթը և անոթի ներսի տարածքը ներկված է կարմիր, լայն ճառագայթաձև ժապավենների տեսքով, որը կրկին անտիկ ավանդների շարունակություն է։

Արտակարգ գեղեցիկ է բաց շագանակագույն փայլեցրած սափորի երկարուկ վզի բեկորը, որը ավարտվում է ուռուցիկ մասի վրա դրված յոթաթերթ շուրթով։ Իր ողջ կերպարով այն հուշում է, որ պետք է պատրաստված լինի ապակյա սրվակների ընդօրինակությամբ։

Հեղեղենի ջնարակած տեսակը ներկայացված է միայն բրնգաններով։ Բոլորը, որպես կանոն, ունեն կլոր ոտք, հարթ կտրած շուրթին սահուն միացած կոկեր։ Շուրթերը և ներքին տարածքը պատած են մուգ կամ բաց կանաչ, կապույտ, դեղին ջնարակով և կրում են անդորր հեռացնելու տեխնիկայով կատարված երկրաչափական ու բուսական զարդեր։ Բեկորները իրենց առատ զուգահեռներն ունեն XI—XIII դդ. միջնադարյան, հատկապես Դվինի, ջնարակած խեցեղենի մեջ։

Միջնադարի շերտից և հորերից հայտնաբերված մետաղե իրերը շատ չեն, սակայն բնորոշ են։ Նախ՝ հետաքրքիր է X 15 սենյակի միջնադարյան հորից գտնված խողովակաձև առարկան։ Այն պատրաստված է երկաթե թիթեղը ոլորելու և ծայրերը եռակցելով միացնելու տեխնիկայով։ Եզրերին և կենտրոնական մասում դրվել են ուռուցիկ զոտիներ, որոնք առարկային տվել են գեղեցիկ տեսք և որ կարևորն է՝ ամրություն։

Նույնքան հետաքրքիր է երկաթե զանգվածեղ խողովակակոթաո դուրգը, որի մեջ պահպանվել են փայտյա կոթի մնացորդները։ Դեպի գագաթն այն սահուն նեղանում է և ունի անցք, որի մեջ հավանաբար ազուցվել է որևէ ծակող ծայր։ Իրանի կենտրոնական մասի վրա ունի երեք շարք մեցական նյուստներ՝ հարվածը դորեղ դարձնելու համար։ Այս զուրգի հետ գտնվել է քառակող, պոչուկավոր զանգվածեղ նետասլաք։

Քառակող ձողից պատրաստված պայտը ունի սմբակի մեջ մտնելիք գամեր և լավ է պահպանված։ Ն 14 սենյակի հորից գտնված կեռ շեղբով և կոթի մեջ ագուցված ուղիղ պոչուկով մանգաղատիպ փոքրիկ գործիքը կարող էր ծառայել այգեգործությանը։

Զարդերից հայտնաբերվել են կենտրոնական անցքով բրոնզե կոճակ, մուգ կապույտ և երկնագույն ապակե ձողերից ոլորման տեխնիկայով պատրաստված օձագլուխ ապարանջան և ապակու երկնագույն շաղախից բլթիկավոր ուլունք։

Հելլենիստական դարաշրջանի ագարակում աշխատանքները կենտրոնացվեցին 1975 թ. պեղված համալիրի հյուսիսից հարավ ձգվող միասնական պատից արևմուտք։ Դրվեցին երեք բառակուսիներ՝ ստուգելու այստեղ շենքի պահպանվածությունը։ Շինարարական մնացորդները համարյա բացակայում են, եթե չհաշվենք արևելք-արևմուտք ձգվող մի պատի հատվածը, որից մի շարք էր պահպանվել։ Դրա փոխարեն հողը լի էր խեցեղեն բեկորներով, շատ բնորոշ ագարակից և ամրոցից հայտնի խեցեղենին (նկ. 6)։ Կարասները հայտնաբերվում են գունազարդ և անզարդ նմուշներով, մեծ և միջին չափերի։ Բոլորը ունեն հաստ կտրած շուրթեր, որոնք ձգվում են դուրս, կարճ վզեր և անմիջապես լայնացող ուռուցիկ ուսեր։ Զարդարված օրինակը ուսերին ունի հորիզոնական գոտիներ՝ կարմիր ու մուգ շագանակագույն, ուղիղ, ժապավենների, իրար ներգծած երկգույն եռանկյունիների և շեղանկյունիների ձևով։ Շուրթը ևս հարդարված է եղել կարմիր և սև ներկով արված ինչ-որ զարդամոտիվով։

Կճուճները նույնպես, ագարակին բնորոշ խոհանոցային և կարմիր ու գունազարդ օրինակներով են ներկայանում։ Խոհանոցային խմբի կճուճները գնդաձև են, կարճ վզերով և լայնաշուրթ։ Կարմիր ու գունազարդ օրինակները ավելի նեղ վզով են, շուրթերը թմբիկավոր, իրանի անցումները ավելի հստակ ձևավորված։ Զարդագոտին տեղադրված է ուսերին՝ մուգ շագանակագույն և կարմիր գոտիներ, ցանցեր, բեկված գծերի փնջեր։ Դրանցից մեկը եղել է ծորակավոր։

Թաս-բրեղանները ամենաառատն են թե՛ քանակապես, թե՛ տեսակներով։ Կլոր շուրթերը ներս թեքված, ոչ խոր, հարթ փոքր նստուկով թասերը փոքր չափերի են, նրբախեցի, շուրթերը ներկված են կարմիր գույնով։ Հարթ կտրած շուրթերով, պսակը իրանի հետ ակոսավոր գոտիներով միացում ունեցող թասերը ևս պատկանում են ագարակին և ամրոցին բնորոշ թասերի խմբին։ Շուրթերը և ներքին տարածքը ժապավենաձև ներկած են կարմիր։ Մեկը շուրթի վրա կրում է սպիտակ, զուգահեռ գծիկներ։ Գրոֆիլավորված պսակով թասերի մի մասի շուրթերը ուղիղ են, մյուս մասինը՝ լավ արտահայտված թմբիկներով։ Մյուս թասերի պես պսակները ներկված են և փայլեցրած։

Ճմպանակները արտակարգ նրբախեցի են, ոնգուն, բարձր կողերով, դրսից բաց շագանակագույն են, իսկ ներքին տարածքը ներկված է սուր շագանակագույն կամ կարմիր։

Պուլիկները գնդաձև են, փոքրիկ հարթ նստուկով, կարճ փոքրիկ վզիկով։ Հանդիպում են սև փխրուն և կարմրաշագանակագույն խիստ զնգուն խեցիով։ Մեկը իրանի ուռուցիկ մասում ունի հորիզոնական ամրացված կանթ։

Ճրագը հարթ հատակով, կարճ կողով և ներս հակված կլոր շուրթով թասաձև անոթ է, որը ունեցել է փոքրիկ քթիկ։ Խեցին բավական հաստ է և ավազախառն։

Աշխատանքային գործիքներից ագարակում հայտնաբերվել են տուֆե և չեչաքարե կոկիչներ, բազալտե ծեծիչ և սրաքարեր։

1983 թ. պեղումների ընթացքում այստեղ գտնվեց մետաղյա անոթի բրոնզե կանթ, որի ներքևի մասում պատկերված է մորուքավոր տղամարդու գլուխ (նկ. 7)։ Կանթը իր կատարյալ զուգահեռն ունի Սիսիանի քարե դամբարանների նյութերի մեջ, որոնք թվագրվում են մ. թ. ա. I դարի երկրորդ կեսով։ Նման կանթերով օժտված անոթները բերված են համարվում արևմուտքից, հավանաբար Իտալիայից[4]։

Արմավիրի պեղումների արդյունքները գալիս են մեկ անգամ ևս հավաստելու նրա բազմաշերտ բնույթը և ընդգծելու նրա դերն ու նշանակությունը Հայաստանի ուրարտական և հելլենիստական դարաշրջանի պատմության և մշակույթի մեջ։

Գ. Ա. ՏԻՐԱՑՅԱՆ, Ի. Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

---

4 Ժ. Դ. Խաչատրյան. Հայաստանում հայտնաբերված արևմտահռոմեական մետաղյա առարկաները.—«Լրաբեր հաս. գիտ.», 1984, № 10։